ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# 02

## 2025

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ - Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման աշխատանքներ

# ԲԱԺԻՆ 1

## Բացատրական մաս, Տեխնիկական մասնագրեր և Շինարարական աշխատանքների կազմակերպում

BIM Engineering
Building Information Modeling

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**Պատվիրատու`** ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

**Պայմանագիր N** ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն

# ՀՀ Շիրակի մարզի Արթիկ - Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման աշխատանքներ

## ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

| | |
|---|---|
| **ԲԱԺԻՆ 1** | **Բացատրական մաս, Շինարարական աշխատանքների կազմակերպում և Տեխնիկական մասնագրեր** |
| **ԲԱԺԻՆ 2** | **Աշխատանքային ծավալների ամփոփագիր, Ծավալաթերթ-նախահաշիվ** |
| **ԲԱԺԻՆ 3** | **Աշխատանքային գծագրեր** |
| **ԲԱԺԻՆ 4** | **Նախահաշիվ** |

**ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ՍՊԸ**
**Տնօրեն** Ա. Մկրտչյան Տեխ.Գիտ. Թեկ.

**Նախագծի գլխավոր ինժեներ**
**/ծրագրի ղեկավար** Վ. Մկրտչյան Տեխ.Գիտ.Թեկ.

# ԲԱԺԻՆ 1

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

## 1. ՆԱԽԱԳԾԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սույն պայմանագրի շրջանակներում «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից մշակվել է աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ), որի համար հիմք է հանդիսացել պայմանագրով տրված տեխնիկական բնութագիրը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ինչպես նաև աշխատանքային նախագծի իրականացման փուլում մեր կողմից տեղում կատարված ուսումնասիրությունները, Պատվիրատուի հետ կայացած քննարկումների արդյունքում ընդունված որոշումները, համաձայնեցումները, տեղեկանքները և այլն, որոնք, ըստ անհրաժեշտության, ներառվել են հավելվածներում:

Աշխատանքային նախագծի սույն փաթեթը ներառում է նախագծի կազմով տրված աշխատանքային 4 բաժինները, որոնք հանդիսանում են սույն նախագծի անբաժանելի մաս և աշխատանքների իրականցման ընթացքում պետք է մանրամասն ուսումնասիրվեն և դիտրակվեն համատեղ:

**1.1. Նպատակը**

Նախագծի նպատակն ՀՀ Շիրակի մարզի Արթիկ - Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման աշխատանքների փաստաթղթերի կազմումը:

**1.2. Շինհրապարակի գտնվելու վայրը**

Շինհրապարակը գտնվում է Երևան քաղաքից –- 110 կմ հեռավորության վրա:

**1.3. Ներդիրներ**

- Լիցենզիաներ

## 2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

I. Նախագծային առաջադրանքը՝ տրված Պատվիրատուի կողմից,
II. Նախագծային տարածքի կադաստրային քարտեզը,
III. Շինարարական հրապարակի գեոդեզիական հետազոտություններ,
IV. Ինժեներաերկրաբանական հետազոտություններ,

Պայմանագրի տեխնիկական առաջադրանքով տրված օբյեկտի համառոտ նկարագիրը բերված է ստորև աղյուսակում.

**Չափաբաժին 3**

**ՀՀ Շիրակի մարզի Արթիկ - Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների տեխնիկական առաջադրանքի պայմանները**

Հեղեղատարը անցնում է Արթիկ և Նոր Կյանք համայքների միջև ընկած հարավ- արևելյան դաշտամիջյան տարածքներով: Հեղեղատարի շուրջ 400 մ երկարության տեղամասում աճել են մեծաքանակ թփեր և ծառեր: Հունի փոքր թեքության պատճառով այն զգալի տղմակալված է, որոշ տեղերում ողողային երևույթների պատճառով նկատելի են հունի 1,5-2,0 մ միջին լայնության որոշ փոփոխություններ: Այս ամենը ՝ապես փոքրացրել են հունի թողունակությունը, ինչի հետևանքով նույնիսկ ոչ մեծ հեղեղաhոսքերի անցման ժամանակ հոսանքը տեղ-տեղ դուրս գալով ափերից ջրածածկ է անում ափամերձ գյուղատնտեսական հողատարածքները:

- Աշխատանքային խմբի կողմից առաջարկվել է հունի 400 մ երկարության տեղամասը մաքրել թփերից և ծառերից,
- հեղեղատարը մաքրել կուտակումներից և կատարել հունի կարգավորման աշխատանքներ

# 3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ

Արթիկի հեղեղատարի հունի տեխնիկական վիճակը գնահատելու նպատակով Բիմ Ինժեներինգ ՍՊԸ-ի աշխատանքային խումբը տեխնիկական բնութագրով տրված հատվածներում անցնելով հեղեղատարի հունի երկայնքով, տեղում իրականացրել է տեխնիկական վիճակի ուսումնասիրություն:

Արտաքին դիտարկումների և ինժեներա-չափագրական աշխատանքները կատարվել են համաձայն ԳՈՍՏ 31937-2011 և ԳՈՍՏ 32016-2012 պահանջների, ֆիքսելով մաքրման և ափապաշտպան աշխատանքների փաստացի ծավալները, հաշվի առնելով ձյան առկայությունը: Ուսումնասիրությունները կատարվել են փետրվար ամսվա սկզբին, երբ դաշտերն ու հեղեղատարը ծածկված էին 10-15սմ ձյան շերտով:

Հեղեղատարի արտաքին տեխնիկական ուսումնասիրությունից հետևում է, որ հունը գրունտային է, գետնի մակերևույթից խորացված 1,6-2.5մ: Այն հիմնականում ունի սեղանաձև կտրվածք, որի լայնությունը հատակին 1,2-2,2մ է, իսկ վերևում 6-8մ, առանձին տեղամասերում մինչև 10մ: Չկան ափապաշտպան հենապատեր:

Ափերի որոշ հատվածներ թմբապատվել են հունի մաքրման ժամանակ հանված տղմախառնուրդով և բարձրացվել են 1.5-2.5մ: Թմբերի և շեպերի անկանոն լցված թույլ գրունտները տոփանված չեն և անձրևաջրերից հեշտությամբ լվացվում են, սահելով դեպի հունը:

Հեղեղատարը լցված է նստվածքներով, որոնց շերտի բարձրությունը հասնում է 0.5-1.2մ: Այն ամբողջությամբ պատված է եղեգներով, անկանոն աճած թփերով ու ծառերով, որոնք խոչնդոտում են ջրի շարժմանը, փոքրացնում թողունակությունը, առաջացնում դիմհար և հեղեղումներ:

Նստվածքների առաջացման հիմնական պատճառներն են.

- Տեղամասի փոքր թեքությունը, փոքր ելքերի ռեժիմները,
- Բերվածքների մեծ հիդրավլիկական խոշորությունը,

- Ափերից հուն գլորված քարերը և չորացած ծառերը
- Շրջադարձերում մեռյալ գոտիները,
- Խոչնդոտները և դիմհարները:

Նստվածքները հուներում ունեն.

- Անկանոն բաշխվածություն և կտրվածք.
- Համատարած աճած եղեգներ և թփեր,
- Հանդիպում են կենցաղային մնացորդների կույտեր:

Տեխնիկական առաջադրանքի համաձայն անհրաժեշտ է իրականացնել հեղեղատարի մաքրման և հունի կարգավորման աշխատանքներ:

## 3.1. Հեղեղատարների նախագծային լուծումները

Հեղեղատարի ափերից դուրս գալու, դիմհարներից և վթարային ռեժիմներից խուսափելու համար անհրաժեշտ է հեղեղատարը մաքրել նստվածքներից և մեծացնել թողունակությունը:

Նախատեսվում է մաքրել հեղեղատարի ինչպես բետոնե ջրանցքի, այնպես էլ գրունտային հատվածները 410մ ընդհանուր երկարությամբ:

Չափագրումների և հաշվարկների կանոնակարգման համար հեղեղատարը ըստ երկարության պայմանակորեն տրոհվել է հաշվարկային այնպիսի հատվածների, որտեղ բետոնյա և գրունտային հուներում առկա նստվածքները ըստ բաշխվածության և երկրաչափական ձևի մոտավորապես նույն են:

Հաշվարկային հատվածների սկզբում և վերջում, ինչպես նաև միջակայքի լայնական կտրվածքների փոփոխման տեղերի կտրվածքներում չափագրվել են նստվածքի լայնությունը, խորությունը և նստվածքի մակերևույթի բնութագրիչ կետերի բարձրությունները:

Հուներում առկա են նաև նստվածքների առանձին կույտաշերտեր, որոնք ունեն անկանոն ձև կախված խոչընդոտի մեծությունից և դիրքից: Նստվածքների փաստացի ծավալների հաշվարկման համար կույտերը պատկերացմամբ վերածվել են առանձին երկրաչափական մարմինների, որոշվել է դրանցից յուրաքանչյուրի ծավալը, ապա ընդհանուրը ծավալը:

Մաքրումը իրականացվելու է հեղեղատարի աջ ափով անցնող գրունտային ճանապարհից և հարթակներից, օգտագործելով էքսկավատոր, բուլդոզեր, բոբկատ:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔԻ ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ ԿՏ 1:

$B1_{հաշվ}; H1_{հաշվ}; W1_{հաշվ}$



**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔԻ ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ ԿՏ 2:**

**$B2_{հաշվ}$;$H2_{հաշվ}$;$W2_{հաշվ}$**




Նախագծում նախատեսվում է իրականացնել մաքրում յուրաքանչյուր հատվածի համար կիրառելով համապատասխան տեխնոլոգիա և մեքենա-մեխանիզմներ:

Հունի մաքրումը իրականացվում է աջ ու ձախ ափերից 0.5մ3 շերեփ և 9-10մ երկարության փորման շառավիղ ունեցող հակադարձ բահ էքսկավատորով, իսկ հունի անհասանելի տեղերի գրունտը և մաքրումից մնացած մնացորդները բուլդոզերով տեղափոխվում են մինչև 20մ էքսկավատորի շերեփին կից, որից հետո էքսկավատորով հանվում են և բարձվում ինքնաթափ:

Հունի մաքրման ժամանակ նստվածքների կողքային մնացորդների հեռացումը իրականացվում է միայն ձեռքով, բանվորական ուժի օգնությամբ, տեղափոխումով էքսկավատորին կից, որտեղից էլ բերվածքները բարձվում են ինքնաթափ:

Բոլոր տիպի բույսերը, որոնք աճում են հունի երկու ափերի միջև պետք է հեռացվեն: Հեռացվում են նաև ջրանցքի եզրին աճող, բայց դեպի ջրանցք թեքված և կախված ծառերը և թփերը:

Հեղեղատարի աշխատանքի կարգավորման և հուսալիության բարձրացման համար նախատեսվել է հունի շեպերի հարթեցում և տոփանում:

## 4. ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծման համար իրականացվել է ինժեներագեոդեզիական աշխատանքներ եղանակային բարենպաստ պայմաններում: Գեոդեզիական հանութագրված տարածքը ընդգրկված է վարչական սահմանում:

Հանութագրման համար օգտագործվել են տարբեր նշանակության գեոդեզիական սարքավորումներ՝ GPS համակարգեր, էլեկտրոնային տախեոմետրեր և այլն:

Կետերն, իրենց կոորդինատների համաձայն, տեղադրվել են տեղագրական և կադաստրային քարտեզների համադրման արդյունքում ստացված միացյալ քարտեզի վրա:

Կազմվել է տեղագրական քարտեզ, որի վրա նշվել են գեոդեզիական կետերը, ռելիեֆը (հորիզոնականներով, բարձրությունների նիշերով), ճանապարհները, կոմունիկացիաները, հողամասերի սահմանները և այլն:

## 5. ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կլիմայական ընդհանուր ցուցանիշները ներկայացնում են օդերևութաբանական հիմնական տարրերի՝ արեգակնային ճառագայթման, օդի ջերմաստիճանի և խոնավության, մթնոլորտային տեղումների և քամու հոսանքի մեծությունները: Տարածքին բնորոշ են ստորև բերված կլիմայական պայմանները:

Նախագծային տարածքը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024-ի, համարվում է ցուրտ շրջան, զով ամառով:

- Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից՝ 1685մ
- Միջին տարեկան ջերմաստիճանը՝ + 11.7$^0$
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 1.2սմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 2.1մ/վրկ
- Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը 62%

Գրունտի սառեցման խորությունը որոշվել է համաձայն ՀՀՇՆ IV-10.01.01-2006-ի պահանջների:

Տարվա ցուրտ ժամանակաշրջանում քամիների գերակշռող ուղղությունը հյուսիս-արևելյան է:

Տարվա տաք ժամանակաշրջանում քամիների գերակշռող ուղղությունը հարավայինն է:

## 6. ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կատարված դաշտային ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների ամփոփման արդյունքում նախագծային տարածքների սահմաններում առանձնացվել են բնահողերի կարգերը, որոնք հիմք են հանդիսացել են Նախագծի «Աշխատանքային ծավալներ» բաժնում հողային աշխատանքների ծավալների հաշվարկման համար:
Նախագծվող երկայնական գոտիների երկրաբնական նկարագրությունը տրված է մեր կողմից իրականացված դաշտային ակնադիտական հետազննությունների և աշխատանքների շրջանին առնչվող պահոցային հաշվետվությունների տվյալների համադրման և ընդհանրացման հիմնա վրա:
Ներկայացնող բնահողերի մշակման խմբերը տրված են ըստ ՇՆևԿ IV-2-82-ի 1-ին և 2-րդ հավաքածուների:

Այս նախագծի շրջանակներում ինժեներա-երկարաբանական նկարագրությունը տրվում է նաև արխիվային նյութերի, ռելիեֆի բնական մերկացումների, տարածքում առկա տարբեր չափերի ու խորությունների խրամուղիների և փորվածքներից տվյալների ընդհանրացման համադրման արդյունքով:

Բնահողերի երկրաբանական-լիթոլոգիական կտրվածքների նկարագրությունը տրված է մակերևույթից մինչև նախագծի կառուցվածքների առանձին հատվածներով ընտրված խորությունների համար:
Հեղեղատարի հողային հունը, լցված է մեծ քանակությամբ բերվածքներով և/կամ կենցաղային աղբով, որը դառնում է ողողումների հիմնական պատճառը:

Իրականացված աշխատանքների արդյունքում նախագծվող տարածքի սահմաններում մեր կողմից առանձնացվել են բնահող-ապարների երկու հիմնական տեսակներ, որոնց նկարագրությունը հիմնական ֆիզիկա-մեխանիկական բնութագրերիհետ միասին բերված է ստորև ներկայացվող տեսքով:

Միջին խոնավությամբ, շագանակագույն թեթևից մինչև ծանր ավազանման ավազակավեր 10-15% մանրախճա-խճավազային լրացումով:
Տեսակարար կշիռը 2.72-2.73գ/սմ2
Ծավալային կշիռը 1.80-1.95գ/սմ2
Բնական խոնավություն 27%
Կմախքի ծավալային կշիռը 1.46 գ/սմ2
Պլաստիկության թիվ-16
Ծակոտկենություն 40%
Ծակոտկենության գործակից 0.87
Ներքին շփման անկյուն 190
Կապակցվածությունը- 0.3-0.5կգ/սմ2
Դեֆորմացիայի մոդուլը 17.5ՄՊա
Թույլատրելի լարումը մինչև 2.0 կգ/սմ2
Բնահողի սեյմիկ կարգը III կարգ
Շինարարական մշակման խումբը 33գ/33 գ III կարգ

**Հաշվի առնելով տեղանքի բարդ երկրաբանական կառուցվածքն ու գրունտի նստվածքների ընդգծված առանձնահատկությունները՝ բացառված չէ, որ շինարարության ընթացքում ուղեգծի որոշ հատվածներում գրունտի մշակման խմբերը (կարգերը) չհամապատասխանեն նախագծայինի հետ: Նման դեպքերում երկրաբանական եզրակացության դեպքում գրունտի կարգերը կճշտվեն՝ հիմք ընդունելով փաստացի քանդված տվյալները, որի արդյունքում կարող է անհրաժեշտություն առաջանալ վերանայել նախագծային լուծումները:**

# 7. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ

Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն Հայաստանում գործող նորմերին և ստանդարտներին կամ դրանց համարժեք ստանդարտներին: Եթե պայմանագրում մեջբերում է արված սպեցիֆիկ ստանդարտների և կոդերի մասին, որոնց պետք է համապատասխանեն ապրանքները և նյութերը, կատարվող կամ փորձարկվող աշխա-տանքները, ապա պետք է օգտագործվեն վերջին հրապարակումներով կարգերը կամ վերանայված տարբերակները և դրանց վերաբերվող ստանդարտները և կոդերը: Եթե մեջբերում է արվում ազգային կամ մեկ այլ երկրի կամ ռեգիոնի ստանդարտների և կոդերի մասին, ապա պետք է ընդունվեն այդ ընդունված ստանդարտները, եթե երաշխավորվում են նույնանման կամ ավելի բարձր որակ: Նշված ստանդարտների և առաջարկված երկընտրանքային ստանդարտների միջև տարբերությունը պետք է կապալառուի կողմից լրիվ նկարագրված լինի և գրավոր ներկայացվի:

# 8. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարության կազմակերպման տարբերակը ընտրում է կապալառուն:

Առաջարկվում է կազմակերպել մեկ շինարարական տնտեսություն՝ համապատասխան օժանդակ կառույցներով, որը շինարարության ընթացքի հետ զուգահեռ կտեղափոխվի և կտեղակայվի իր համար հատկացված համապատասխան չօգտագործվող տարածք:

**Կապալառուն, աշխատանքների միավոր արժեքը որոշելիս, պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ աշխատանքները կատարվելու են շինարարական մեքենաների և մեխանիզմների և բանվորների համար ոչ բարենպաստ պայմաններում, ուստի Կապալառուն պետք է նախապես ուսումնասիրի տեղանքը և համապատասխանաբար պլանավորի շինարարության կազմակերպումը նախքան մրցույթով կամ մեկ այլ եղանակով ստանձնած պայմանգրով նախագծով տրված աշխատանքները կատարելը:**

## ➢ Ժամանակավոր մոտեցող ճանապարհներ

Կապալառուն պետք է կառուցի և շահագործի ժամանակավոր ճանապարհները՝ ընդգրկելով կամուրջները, որոնք պետք են շինարարական աշխատանքները իրականացնելու համար:

## ➢ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| h/h | Անվանում | Քանակ | Չափեր, մ | Ծախ-սվող էլէներգ. կՎտ | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Աշխեկի գրասենյակ | 1 | 9x2.2 | 3 | Վագոն տնակ |
| 2 | Գործիքների պահեստ | 1 | 6x2.5 | 2 | կոնտեյներայինին |
| 3 | Մեկ տեղանոց բիոզուգարան | 1 | | | - |
| 4 | Կիսածածկ պահեստ | 1 | 5x3 | | - |
| 5 | Հագուստի փոխման տնակ | 1 | 9x2.2 | 3 | Վագոն տնակ |
| 6 | Կանգառման հարթակ | 1 | 6x4 | | - |

Կապալառուն պատասխանատվություն է կրում շինհրապարակը սարքին վիճակում պահելու համար և աշխատանքների ամբողջ ժամանակահատվածում իրականացնում է վերջինիս պահպանումը: Նյութերը և սարքավորումները պետք է ընդունվեն և կանոնավոր կերպով դասավորվեն:

## ➢ Կատարողական փաստաթղթեր

Օբյեկտի ավարտական ակտի պատրաստումից առաջ Կապալառուն նախապատրաստում և Պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերի 2 սովորական պատճեն և 1 օրինակ գծագրապատճեն (PDF), որոնց վրա պետք է պարզ նշված լինեն տեղադրությունները, խորությունները, թեքությունները, բարձրությունները, բոլոր հիմնական կառուցվածքների ձևերն ու չափսերը, այնպես, ինչպես դրանք իրականացվել են:

Բոլոր դաշտային մատյանները, հաշվարկները, քարտեզները և այլ գեոդեզիական նյութերը պետք է հանձնվեն Տեխհսկիչին և Պատվիրատուին այդ աշխատանքների ավարտից հետո:

Տվյալները, որոնք ստացվում են գեոդեզիական աշխատանքներից, մտցվում են դաշտային մատյանների մեջ և հանձնվում:

## ➢ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կատարված աշխատանքները և օգտագործվող նյութերի որակները պետք համապատասխանեն նախագծին, պահանջվող ստանդարտներին և նորմերին: Կատարողական գծագրերը պետք է համապատասխանեն Հայաստանում գործող

## ➢ Հիգիենայի պահանջների ապահովում

Կապալառուն, համաձայն Հայաստանի օրենքների, օբյեկտում ապահովում է սանիտարական պայմաններ և առաջին բուժօգնության հնարավորություն աշխատողների համար:

## ➢ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կապալառուն պետք է կառուցի և սարքավորի հրդեհային հսկիչ կետերը, ապահովի հակահրդեհային միջոցների պիտանելիությունը, դրանց հասանելիության պայմանների ստեղծումը, շենքերի և շինհրապարակների գույքի անվտանգության համար:

## ➢ Լուսավորություն և Ցանկապատում

Կապալառուն տեղադրում և սպասարկում է շինհրապարակի լուսավորության համակարգը, կառուցում և պահպանում է շինարարության գոտու ժամանակավոր ցանկապատումը: Կապալառուն ցանկապատումը կատարում է այնպես, որ կենդանիներ մուտք չունենան շինարարական գոտի: Կապալառուն պարբերաբար ստուգում է ցանկապատը և անմիջապես վերացնում առաջացած դեֆեկտները: Ժամանակավոր ցանկապատը մնում է մինչև աշխատանքների ավարտը:

## ➢ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԱՔՐՈՒՄ

Վերջացնելով աշխատանքը մինչև օբյեկտի վերջնական ընդունումը պատվիրատուի կողմից՝ կապալառուն շինհրապարակից մաքրում և հեռացնում է շինարարական թափոնը, չօգտագործված նյութերը, հավաքում և տեղափոխում սարքավորումները:

## ➢ Գոյություն ունեցող կառուցվածքների վնասումը

Կապալառուն իրավունք չունի վնաս հասցնել գոյություն ունեցող կառուցվածքներին, անկախ նրանից, թե դրանք Պատվիրատուի կամ ինչ-որ երրորդ կողմի սեփականություն են հանդիսանում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վնասվածքների անհրաժեշտությունը համաձայնեցված է և հանդիսանում է կատարվող աշխատանքների մաս:

Կապալառուն աշխատանքները պետք է կատարի այնպես, որ գոյություն ունեցող այլ ենթակառուցվածքները որոնք գտնվում են շինհրապարակի մոտակայքում, չվնասվեն, անգամ եթե դրանք ցույց տրված չեն աշխատանքային գծագրերում:

Կապալառուն պատասխանատվություն է կրում կորստի, վնասնածքների համար և իր հաշվին պետք է կատարի անհրաժեշտ աշխատանքները՝ դրանք վերացնելու համար:

- **Աշխատանքների համար պահանջվող մեքենաներ և սարքավորումներ**

Շինարարական մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվությամբ և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանը կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:
Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

| NN | մեխանիզմների անվանում | Մեքենաների մակնիշը և տիպը |
|---|---|---|
| 1 | Ավտոինքնաթափ | բեռնատվ. 10-12տ |
| 3 | Բոբկատ | |
| 4 | Ավտոամբարձիչ | բեռնաբարձ. 16տ |
| 5 | Բուլդոզեր | հզորությունը 96կՎտ |
| 6 | Կոմպրեսոր | արտադ-յունը 10մ$^3$/րոպե |
| 7 | Հետահար մուրճ | ՄՕ-10 |
| 8 | Ձեռքի պնեվմատոփիչ | 40կգ |
| 9 | Էքսկավատոր | շերեփի տարողությունը 0.5մ3 |
| 10 | Էքսկավատոր-բարձիչ | Շերեփը 0,3մ3, բարձիչը 1-1,5մ3 |
| 11 | Մակերեսային հարթ վիբրատոր | - |
| 12 | Մետաղական բադյա | Տարողությունը 0,5-2 մ$^3$ |
| 13 | Պոմպ «Գնոմ» հարկ եղած դեպքում | 30մ3/ժամ արտադրողականությամբ |
| 14 | Քարհավաքիչ-արմատահանիչ տրակատորի բազայի վրա | Հզորությունը 96կՎտ |
| 15 | Թփուտակտրիչ մեքենա | 76կՎտ տրակտորի բազայի վրա |

# 9. ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

**Ծավալաթերթում բոլոր հիմնական և օժանդակ նյութերի արժեքները, որոնք նշված չեն առանձին տողերով (կամ նշված չեն, որ գոյություն ունեցող են) ներառված են համապատասխան տեղադրման /մոնտաժման/ տողերում:**

**Կապալառուն աշխատանքների միավոր արժեքը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնի բոլոր բարդությունները, լրացուցիչ աշխատանքները և հավելյանյութերը (բետոնի և ցեմենտե շաղախների համար) և ընդգրկի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:**

# 10. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Շինարարական աշխատանքները պետք է կազմակերպել՝ խիստ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները՝ համաձայն ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» պահանջների:

Համանյքների տարածքում կամ համայնքի արվարձանում, ինչպես նաև բանուկ ճանապարհների երկայնքով գտնվող շինարարական հրապարակում՝

- Պոտենցիալ վտանգավոր զոնայում գտնվող վերակառուցվող հատվածի շինհրապարակը պետք է մեկուսացվի ազդանշանային պարսպող ցանկապատով՝ համաձայն ԳՈՍՏ 23407-85-ի:
- Շինհրապարակը պետք է լուսավորվի: Լուսավորությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող ազդեցության: Ոչ լուսավորված տարածքներում աշխատանքների կատարումը արգելվում է:
- Օբյեկտը պետք է համալրված լինի հրդեհաշիջման համակարգով:
- Կրակային աշխատանքների կատարման դեպքում արգելվում է աշխատել անսարքություն ունեցող սարքավորումներով:
- Գազով բալոնները պահման, տեղափոխման և շահագործման ժամանակ պետք է պաշտպանվեն արևի ճառագայթներից և այլ ջերմային աղբյուրներից:
- Թույլ չտալ թթվածնով բալոնների, ճնշման կարգավորիչների և եռակցման սարքավորումների հպումը տարբեր յուղերի և յուղային հագուստի հետ:
- Առանց մեկուսացման կամ վնասված մեկուսացումով էլեկտրալարերի, ոչ ստանդարտ էլեկտրաապահովիչների օգտագործումը չի թույլատրվում:
- Էլեկտրաեռակցման հաղորդալարերը պետք է միացվեն մամլման, եռակցման կամ հատուկ սեղմակների միջոցով:
- Աշխատելու ժամանակ էլեկտրաեռակցման սարքավորումները պետք է լինեն հողանցված:
- Կոլեկտորներում աշխատանքներ կատարելու ժամանակ պետք է բացվեն մոտակա երկու դիտահորերի կափարիչները:
- Վնասակար կամ պայթյունավտանգ լուծիչներ պարունակող նյութերը պետք է պահվեն հերմետիկ փակ տարայի մեջ:
- Գործարկված շարժիչով մեքենաները և տրանսպորտային միջոցները առանց վերահսկողության թողնելն արգելվում է:
- Մոնտաժման գոտու սահմանագծերին պետք է տեղադրվեն անվտանգության նշաններ:

Շինաղբի և թափոնների տեղափոխման ժամանակ ավտոինքնաթափի թափքը պետք է ծածկված լինի պոլիէթիլենային թաղանթով, որը կպաշտպանի շինաղբի թափումը համայնքի փողոցների և համայնքից դուրս ճանապարհներին:

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների՝ աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով՝ ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

# 11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Շինարարական աշխատանքերի իրականցման արդյունքում գործունեության համար ընտրված տարածքում լանդշաֆտի, բուսական ու կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը հիմնականում պայմանավորված կլինի շինարարական աշխատանքների իրականացմամբ: Այդ ազդեցությունները կլինեն փոքրածավալ և կկրեն ժամանակավոր բնույթ: Բացասական ազդեցությունները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ակնկալվում են հետևյալ բացասական ազդեցությունները.

- օդի աղտոտում,
- աղմուկ,
- երթևեկելի ու հետիոտնային ճանապարհների խաթարում և ճանրաբեռնվածություն,
- հողի էրոզիա և հողատարման պրոցեսներ,
- շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով,
- հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով:

Ենթածրագրի իրականացումը կունենա դրական սոցիալական արդյունքներ: Այն անմիջականորեն կբարելավի ծրագրում ընդգրկված համայնքի բնակչության կյանքի որակը:

Բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, այդ թվում՝

- ժամանակավոր օգտագործված հասարակական և մասնավոր հողերի վերականգնում,
- նախազգուշական միջոցներ՝ կապված ջրային օբյեկտների աղտոտման կանխման հետ,
- ծառերի և բույսերի պահպանություն,
- բոլոր օգտագործվող նյութերի ճիշտ տեղադրում,
- շինհրապարակի անհրաժեշտ մաքրում և կարգավորում,
- սանիտարական միջոցառումներ,
- վնասակար ազդեցության նվազեցում:

Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի հեռացումը աղբավայր: Կապալառուն պարտավոր է նախատեսել միջոցառումներ, կապված շինարարական փոշուց օդի աղտոտման նվազեցման հետ:

Կապալառուի օժանդակ կառուցվածքները և պահեստային հրապարակները պետք է տեղակայված լինեն հնարավորին չափով շինհրապարակի սահմաններում:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և առավերագույս պահպանվի բնական լանդշաֆտը: Արտաքին միջավայրը՝ հանքերը, մշակվող տարածքները, անտառները, թփուտները, պետք է պաշտպանվեն Կապալառուի ոչ բարենպաստ քայքայիչ գործողություններից:

Շինարարական աշխատանքները կատարելուց հետո, անհրաժեշտ է կատարել վերականգնողական աշխատանքներ, բարեկարգել տարածքը, արտաքին միջավայրի հետագա քայքայման կանխման նպատակով (հողի էրոզիա և այլն):

# 12. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

**Հողի էրոզիան և հողատարման գործընթացները** կանխելու նպատակով անհրաժեշտ է նվազագույնի հասցնել խրամուղիների, ինչպես նաև փոսորակները բաց թողնելու ժամանակահատվածը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո աշխատանքային տարածքները պետք է վերականգնվեն հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

- Շինհրապարակի մաքրում մնացորդային գրունտային զանգվածներից և շինարարական նյութերից,
- Բարեկարգ վիճակում գտնվող ասֆալտբետոնե ծածկույթների վերականգնում՝ նույն որակով,
- Քայքայված և կիսաքանդ վիճակում գտնվող ասֆալտբետոնե, ինչպես նաև գրունտային ծածկույթով փողոցներում՝ վերականգնում:

**Հողի բերրի շերտի վնասումը կամ լանդշաֆտի դեգրադացիան** կանխելու նպատակով անհրաժեշտ է հողի վերին շերտը պահեստավորել այդ նպատակի համար նախատեսված վայրում, հետագայում օգտագործել տարածքների վերականգնման համար: Շինարարական տարածքը պետք է մաքրվի շինարարական և կենցաղային աղբից և հարթեցվի՝ լանդշաֆտը բերելով նախնական տեսքի:

**Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը վառելանյութով և քսայուղերով** բացառելու համար անհրաժեշտ է վերջիններս պահեստավորել հողային և ջրային ռեսուրսներից մեկուսացված տարածքներում, հատուկ տարողությունների մեջ: Օգտագործված քսայուղերի հավաքման համար նախատեսել հատուկ տարողություններ, որոնք հետագայում կհեռացվեն հատուկ տեղադրման կամ վերամշակման համար հատկացված վայրեր:

**Շինարարական աղբով և մնացորդային հողային զանգվածով** շրջակա տարածքների աղտոտումը կանխելու նպատակով, համայնքների ղեկավարների կամ աղբավայրը, շահագործողների հետ նախապես կնքված պայմանգրերի համաձայն, դրանք տեղադրել համապատասխան վայրերում:

**Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող փոշու ազդեցությունը** նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը:

**Աղմուկի ազդեցությունը** կանխելու նպատակով մշակել ժամանակացույց, սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

**Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության** հետևանքով բնակչությանը պատճառած անհանգստությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է սահմանված վայրեր տրամադրել բեռնատար մեքենաների կայանման համար, շինարարությունն իրականացնել ըստ փուլերի՝ շինարարական աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ տրամադրելով բնակչությանը, տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, շրջանցումներ կամ պատնեշներ:

Շինարարության ժամանակ բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգները կանխելու նպատակով ժապավենով առանձնացնել շինհրապարակը, վերահսկել չիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, որակավորված աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացնել սարքավորումների զննումներ, ինչպես նաև անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել դասընթացներ առաջին օգնության և անվտանգության հարցերի վերաբերյալ:

Ազդակիր համայնքը և տեղի բնակչությունը պետք է հանրային խորհրդակցությունների միջոցով պատշաճ կերպով իրազեկվեն սպասվելիք աշխատանքների, դրանց ժամանակացույցերի և իրականացվելիք բոլոր միջոցառումների վերաբերյալ, քանի որ տեղեկատվության պակասը կարող է դժգոհությունների և բողոքների առիթ հանդիսանալ:

Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքում հնարավորինս կնվազեցվեն շինարարական աշխատանքների արդյունքում պատճառված անհանգստությունները:

## 13. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Կապալառուն ապահովում է ամբողջ շինարարության ընթացքը լուսանկարչական ալբոմներով՝ տրամադրելով դրանք հեղինակային և տեխնիկական հսկիչներին թաքնված ԱԿՏ-երի հետ՝ աշխատանքների վճարման կատարաողականի ներկայացման ժամանակ: Լուսանկարները կամ տեսանկարահանումները պետք է լուսաբանեն ամբողջ աշխատանքների իրականացման ընթացքը: Կապալառուն ներկայացնում է աշխատանքների ընթացքի, ծածկված և ավարտված աշխատանքների լուսանկարների օրինակները պետք է լինեն 100x120մմ ոչ պակաս չափերի:

**Կապալառուն յուրաքանչյուր միջանկյալ կատարողական ԱԿՏ-ի հետ պետք է ներկայացնի աշխատանքների կատարման լուսանկարները: Լուսանկարները ներակայացվում են էլեկտրոնային տարբերակով: Առանց պատվիրատուի գրավոր թույլտվության լուսանկարները չեն ներկայացվում այլ անձանց:**

## 14. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Օբյեկտի շինարարության տևողությունը որոշվել է՝ համաձայն СНиП 1.04.03-85 «Շենքերի և շինությունների շինարարության տևողության նորմեր» պահանջների :

Շինարարության տևողության նորման ընդգրկում է ներհրապարակային նախապատրաստական աշխատանքների սկսման օրվանից մինչև օբյեկտի շահագործման հանձնման օրը:

Օբյեկտի շինարարության իրականացման համար նախատեսվում է մեկ բանվորական կոմպլեքս բրիգադա և անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներ:

**Աշխատանքների տևողությունը կազմում է 1 ամիս:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000486, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-04, «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ ԱՌԻՆՋ 1 ՄԿՐՇ., 1/7, 5

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 04.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG8C-D45E-E9A4-2CD7**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000486-07

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

27.09.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 04.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG89-DA47-1CA1-61BD**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):